



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“ 25 ” 10 2021թ.

N..... 1980-16

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2022 թվականի մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

25.10.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Նախարար Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
□——»——2021 թվականի N —————Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՄԻԱՄՆԱԿԱՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ
ՓՈԽԱՂՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ			
	անվանումը	տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների քանակը (ներառյալ պահուստային ավտոբուսների քանակը)	Մրցույթի անցկացման օրը
1	2	3	4	5
1.	Արարատի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	88 փաստացի 13 պահուստային	2022 թ. հունվարի 20
2.	Լոռու մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	46 փաստացի 7 պահուստային	2022 թ. փետրվարի 24
3.	Շիրակի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	61 փաստացի 9 պահուստային	2022 թ. ապրիլի 12
4.	Արագածոտնի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	42 փաստացի 6 պահուստային	2022 թ. հունիսի 28
5.	Գեղարքունիքի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	69 փաստացի 10 պահուստային	2022 թ. օգոստոսի 17
6.	Վայոց ձորի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	35 փաստացի 5 պահուստային	2022 թ. սեպտեմբերի 27
7.	Տավուշի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	40 փաստացի 6 պահուստային	2022 թ. հոկտեմբերի 20
8.	Սյունիքի մարզի միասնական երթուղիներ	ավտոբուսային /միկրոավտոբուսային	45 փաստացի 6 պահուստային	2022 թ. նոյեմբերի 23